ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 2007, 260 էջ:

Հայաստանի 1920-1922 թվականների բարդ և հակասական ժամանակաշրջանի պատմության տարբեր հիմնահարցերի ուսումնասիրությունը մշտապես գտնվել է պատմաբանների ուշադրության կենտրոնում: Սակայն խորհրդային ժամանակաշրջանում, կոմունիստական գաղափարախոսության և միակարծության պայմաններում հնարավոր չէր անցյալի պատմական դեպքերն ընդգրկել և լուսաբանել իրենց ամբողջության մեջ, չշրջանցել սուր հիմնահարցերը, չհարթել սուր անկյունները՝ տուրք չտալով ակնհայտ ստին, լավագույն դեպքում՝ կիսաճշմարտությանը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, ազգային անկախության, ժողովրդավարության և բազմակարծության պայմաններում, հայ պատմաբանները հնարավորություն ստացան կատարելու օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրություններ՝ միակ չափանիշը համարելով պատմականությունը և պատմական ճշմարտությունը: Պատմագիտության բնագավառում առաջ եկան բազմաթիվ նոր մոտեցումներ, հիմնահարցերի նոր մեկնաբանություններ, գիտական շրջանառության մեջ դրվեցին գաղտնազերծված արխիվային սկզբնաղբյուրներ: Այս առումով արժեքավոր աշխատանք է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Խաչատրյանի «Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ.» մենագրությունը, որը հրատարակել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը: Հեղինակն իրավացի է, երբ նշում է, որ «ազգային պետականության զարգացման արդի շրջանում հայ ժողովրդի շահերը պահանջում են, որպեսզի Հայոց պատմությունն ուսումնասիրվի ոչ թե այս կամ այն գաղափարախոսության՝ այլ միայն հայ ժողովրդի և հայկական պետության ազգային ու ռազմավարական շահերի տեսանկյունից»:

Կ. Խաչատրյանի մենագրության լույսընծայումը խիստ արդիական է: Նոր հազարամյակի սկզբին Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, որպես անկախ ու ինքնիշխան պետություններ, շարունակում են զարգացնել երկու երկրների և ժողովուրդների միջև պատմականորեն ձևավորված բարեկամական հարաբերությունները, համագործակցում են քաղաքական և ռազմական, սոցիալ-տնտեսական և գիտամշակութային ոլորտներում, հանդիսանում են ռազմավարական դաշնակիցներ:

Գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային վավերագրերի, ժամանակի մամուլի հրապարակումների, պատմագիտական գրականության հարուստ նյութերը՝ հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների պատմությունը Հայաստանի խորհրդայնացման գործընթացի սկզբից մինչև ԽՍՀՄ կազմավորումը:

Կ. Խաչատրյանը փորձել է ընդգրկել և բարձրացնել թեմային առնչվող սկզբունքային հարցերը, որոնք այսօր էլ կանգնած են պատմագիտության առջև: Հեղինակը փորձում է գտնել դրանց ճիշտ պատասխանը, որ բխում է նրա անկողմնակալությունից: Մենագրության արժանիքներից է այն, որ հիմնախնդիրներն առաջադրվում են տարածաշրջանային իրադարձությունների, Հայաստանի և Ռուսաստանի պատմության ընդհանուր հենքի վրա:

1920-1922 թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմության հանգամանալից ուսումնասիրության շնորհիվ հեղինակը հանգել է մի շարք կարևոր և սկզբունքային եզրակացությունների, որոնցից կառանձնացնեինք մի քանիսը:

Հայաստանը խորհրդայնացնելու խնդիրը Խորհրդային Ռուսաստանի իշխանություններն առաջին հերթին կարևորում էին տարածաշրջանային շահերի տեսանկ-

յունից, ամբողջ Անդրկովկասը խորհրդայնացնելու և խորհրդային ազդեցության ոլորտում պահելու, քեմալական Թուրքիայի հետ անմիջական հաղորդակցության ցամաքային կապ հաստատելու անհրաժեշտությամբ:

1920 թ. վերջին տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակում՝ թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության, վերջինիս արևմտյան դաշնակիցների դատապարտելի անգործության, Խորհրդային Ռուսաստանի որդեգրած արևելյան քաղաքականության, որը հիմնված էր քեմալական Թուրքիայի հետ սերտ համագործակցության վրա, Խորհրդային Ադրբեջանի՝ թշնամական, Վրաստանի Հանրապետության՝ ոչ բարեկամական տրամադրվածության պայմաններում Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի էր:

Խորհրդային հռչակվելուց հետո Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ, հեղինակի խոսքով՝ «Խորհրդային Հայաստանը 1920-1922 թթ. թե ներքին և թե արտաքին քաղաքականության հիմնահարցերում թեև հիմնականում առաջնորդվում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով և հրահանգներով, այնուհանդերձ՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո, մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորումը, Հայաստանն ուներ ինքնիշխան կարգավիճակ, պետականությունն արտահայտող բոլոր խորհրդանիշները, միջպետական պայմանագրային հարաբերություններ էր հաստատել ինչպես խորհրդային հանրապետությունների, այնպես էլ արտասահմանյան մի քանի պետությունների հետ, միջազգային իրավական ճանաչում ստացել նրանց կողմից, Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները գործում էին մի շարք երկրներում: Վերջապես, Խորհրդային Հայաստանն էր, որ հայոց պետականության պատմության մեջ առաջինն ունեցավ իր Սահմանադրությունը (Հիմնական օրենքը)»:

Խորհրդային իշխանության առաջին ամիսներին հայ բոլշևիկները Հայաստանում նույնությամբ կրկնեցին Ռուսաստանում բոլշևիկների կիրառած կառավարման ձևերը, և ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, Հայաստանում նույնպես հաստատվեց կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության մենիշխանությունը: Նոր իշխանությունների կողմից Հայաստանում գործադրված բռնությունները հանգեցրեցին երկրում ներքաղաքական իրադրության կտրուկ սրմանը: 1921 թ. փետրվարյան ապստամբության հետևանքով խորհրդրդային իշխանությունը Հայաստանի մի մասում տապալվեց: Սակայն փետրվարյան ապստամբության պարտությունը և խորհրդային իշխանության վերահաստատումը Հայաստանում անխուսափելի էին, քանի որ վերջինիս թիկունքին կանգնած էին Խորհրդային Ռուսաստանը և նրա Կարմիր բանակը: Ապստամբությունը թեև պարտվեց, սակայն սթափեցնող ներգործություն ունեցավ նոր իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն իրականացնել վերափոխումները Հայաստանում:

Հայաստանի խորհրդայնացումից հետո նրա սահմանների որոշման խնդրում այսուհետև որոշիչ մասնակցություն էր ունենալու Խորհրդային Ռուսաստանը: 1921 թ. սկզբին Հայաստանի համար ռազմաքաղաքական նպաստավոր իրավիճակ էր ստեղծվել հայ-վրացական տարածքային վեճերից մեկը՝ Լոռու չեզոք գոտու խնդիրը, իր օգտին լուծելու համար: Լոռու ազատագրումը վրացական զինագրավումից և Հայաստանին միացնելը դարձան խորհրդային երկու հանրապետությունների՝ Ռուսաստանի և Հայաստանի ռազմաքաղաքական համագործակցության առաջին արդյունքը: Ներկայացնելով հիմնախնդիրը՝ հեղինակը եզրակացնում է, որ Լոռու չեզոք գոտում վրացական զինագրավման դեմ հայերի բարձրացրած ապստամբությունը Ռուսաստանն առաջին հերթին կարևորում էր Վրաստանի խորհրդայնացման հեռանկարներով, ինչն էլ այնուհետև իրականացվեց: Ի դեպ, օգտագործելով խնդրին վերաբերող մեծաքանակ արխի-

վային փաստաթղթեր, որոնց զգալի մասը գիտական շրջանառության մեջ չի եղել, Կ. Խաչատրյանը հայ պատմագրության մեջ առաջին անգամ մանրամասն ներկայացնում է Ռուսաստանի կողմից Վրաստանի խորհրդայնացման գործընթացը:

Հեղինակը ճիշտ է գնահատում ոչ միայն հայ-վրացական, այլև հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմանների որոշման հարցում Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը: Հիրավի, խորհրդային իշխանությունները խնդիրը կապում էին «խորհրդաքեմալական հակաիմպերիալիստական դաշինք» ստեղծելու գաղափարի հետ, ինչն էլ իր բացասական դերը խաղաց Հայաստանի համար: Թուրքիան և «ամբողջ Արևելքը» խորհրդայնացնելու բոլշևիկյան ծրագրերը դեռևս շարունակում էին օրակարգում մնալ, թեև դրանց մասին չէր բարձրաձայնվում: Հանգամանորեն ներկայացնելով ՀՍԽՀ սահմանների որոշման հարցում, ինչպես նաև Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան փոխհարաբերությունների ոլորտում Մոսկվայի և Կարսի 1921 թ. կոնֆերանսների, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոյի որոշումների բացասական դերը, հեղինակը եզրակացնում է, որ Խորհրդային Ռուսաստանը չպաշտպանեց հայ ժողովրդի շահերը, դրանք զոհաբերեց քեմալական Թուրքիայի հետ համագործակցության վրա հիմնված իր արևելյան քաղաքականության հեռանկարներին: Ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի պատմական տարածքների զգալի մասը մնաց Թուրքիայի և Ադրբեջանի, Վրաստանի կազմում, դրանով իսկ տարածաշրջանում ուժեղացավ թուրք-ադրբեջանա-վրացական գործոնը, թուլացավ՝ հայկականը: Հայաստանի համար միակ դրականը թերևս կարելի է համարել այն, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Ռուսաստանի հաստատակամ դիրքորոշման շնորհիվ Թուրքիան ճանաչեց Հայաստանի ինքնիշխանությունը, զրկվեց նրա ներքին գործերին միջամտելու հնարավորությունից:

Գիտական մեծ արժեք է ներկայացնում աշխատության այն մասը, որը վերաբերում է Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի միջև 1921-1922 թթ. Միջպետական փոխհարաբերություններին: Ամենայն մանրամասնությամբ լուսաբանվում է նաև խորհրդային հանրապետությունների միավորման, Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորման գործընթացը, դրանում Հայաստանի մասնակցությունը և համագործակցությունը Ռուսաստանի հետ: Հեղինակը հետաքրքիր և նոր նյութեր է օգտագործել հարցը շարադրելիս, նա եզրակացնում է, որ, ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի, Անդրդաշնության, Հայաստանի ղեկավարությունն անվերապահորեն պաշտպանում էր կենտրոնական իշխանությունների քաղաքականությունը, քանի որ համոզված էր, որ խորհրդային հանրապետությունների միավորման գաղափարը բխում է Հայաստանի և հայ ժողովրդի շահերից: Հայաստանի իշխանությունները դրանում էին տեսնում երկրի անվտանգությունը պաշտպանելու և ժողովրդին սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս հանելու միակ ճանապարհը:

Հեղինակը միաժամանակ նշում է, որ բոլշևիկյան կուսակցությունը որդեգրել էր խորհրդային ազգային հանրապետությունների ներքին և արտաքին ինքնուրույնության իրավազրկման, դասակարգային և կուսակցական շահերը ազգային շահերից վեր դասելու քաղաքականություն, ինչը շղարշվում էր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության շահերով: Կ. Խաչատրյանը արդարացիորեն նշում է, որ դե յուրե անկախ համարվող Խորհրդային Հայաստանը իրականում զրկված էր անկախ արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից և առանց Մոսկվայի թողտվության նույնիսկ միջազգային Կարմիր խաչի և Ամերկոմի հետ հայկական կողմի ստորագրած համաձայնագրերը

դիտվում էին որպես անջատողականության դրսևորում և խստորեն դատապարտվում:

Մենագրությունում Կ. Խաչատրյանը ընդգծում է խորհրդային իշխանության առաջին տարիներին հայ ժողովրդին Ռուսաստանի ցույց տված սոցիալ-տնտեսական օգնության էական նշանակությունը: Դրա շնորհիվ Հայաստանը հնարավորություն ստացավ ձեռնամուխ լինելու ժողովրդական տնտեսության վերականգնմանը, երկրում սոցիալական դժվարությունների մեղմացմանը և պետական իշխանության ամրապընդմանը: Դրվեց այն հիմքը, որի վրա զարգացան և աննախադեպ հաջողությունների հասան Հայաստանի ժողովրդական տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում:

Կարծում ենք՝ հաջողված այս աշխատությունը կշահեր, եթե հեղինակն ավելի մեծ ուշադրություն հատկացներ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայ-ռուսական գիտակրթական և մշակութային համագործակցության խնդիրներին, որոնք ոչ պակաս կարևոր նշանակություն ունեին Խորհրդային Հայաստանի համար:

Երիտասարդ պատմաբանը գնահատելի աշխատանք է կատարել, ստեղծել է մնայուն մի աշխատություն, որը նոր խոսք է հայ պատմագրության մեջ և կարևոր ներդրում Հայաստանի 1920-1922 թթ. պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում:

ՎԻՐԱԲՅԱՆ Ա. Ս.
Պատմական գիտությունների դոկտոր